

Մեր աղջիկ երեխաները



- Հայաստանում բնակվում է մոտ 422.000 աղջիկ երեխա (0-18 տարեկան):

- Մեր երեխաների, այդ թվում աղջիկների, յուրաքանչյուր հինգից երկուսը (42,8%) ապրում են աղքատության մեջ, իսկ նրանցից 3,7%-ը ծայրահեղ աղքատ են:

- Հայաստանում աղջիկ երեխա ցանկացող ամեն ընտանիքին բաժին է ընկնում տղա երեխա ցանկացող վեց ընտանիք:

- Ծնվելուց հետո աղջիկ երեխաների նկատմամբ հայ ընտանիքները ցուցաբերում են նույն խնամքն ու հոգատարությունը, ինչ տղա երեխաների նկատմամբ:

- Հայաստանում ամեն տարի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման պատճառով չի ծնվում միջինը 1500 աղջիկ:

- Մեր երկրում աղջիկ երեխաներն արդեն մոտ 45.000-ով քիչ են տղա երեխաներից (0-ից 18 տարեկան), և այդ միտումը շարունակվում է:

- 2013-ին ծնվել է 41.906 երեխա, որոնցից 19.570-ը՝ աղջիկ և 22.336 տղա, այսինքն՝ 100 աղջկան բաժին է ընկել 114 տղա, մինչդեռ բնական համասնությունը պիտի լիներ 100 աղջկան 102-106 տղա:

- Հայաստանում նորածին աղջիկներին ամենահաճախն անվանակոչում են Նարե, Մարի, Մանե:

Մտահոգիչ վիճակագրություն

Աշխարհում ամեն երրորդ աղջկան բռնի կերպով ամուսնացրել են երեխա ժամանակ:

Ամեն օր 7 հազար անչափահաս աղջիկ է երկրագնդի տարբեր ծայրերում ստիպողաբար ամուսնացնում:

Ամենից հաճախ այդ պրակտիկան հանդիպում է Հարավային Ասիայում (46%), Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներում (37%), Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի պետություններում (29%): Եվրամիությանը և ԱՊՀ տարածքին նման ամուսնությունների 11%-ն է բաժին ընկնում:



ՄԱԲԳ-ի տվյալներով վերջին տասնամյակի ընթացքում աշխարհում գրանցվել է 70 մլն վաղ ամուսնություն: «Եթե այս միտումը պահպանվի, ապա առաջիկա 10 տարիների ընթացքում մինչև 18 տարին լրանալը ամուսնացած աղջիկների թիվը 2020 թ. կհասնի 142 մլն, ընդ որում, նրանցից 50 մլն կլինեն 15 տարեկանից ցածր: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր տարի 18 տարին չլրացած 14 մլն 200 հազ. աղջիկ կհամարվի անկիրթ, անառողջ, բռնության և ստրկության գոհ դարձած կանանց բանակը:

Աղջիկը պետք է իրավունք ունենա ընտրելու

«Մանուկ հասակում ամուսնացնելու սոցիալական, մշակութային կամ կրոնական որևէ հիմնավորում չի կարող արդարացնել այն վնասը, որ այդ ամուսնությունները պատճառում են երիտասարդ աղջիկներին ու նրանց ներուժին: Մենք պետք է միասին աշխատենք երեխաների ամուսնությանը վերջ դնելու համար: Դա միակ ուղին է, որով մենք կարող ենք կանխել երեխաների ամուսնությունը, որն այլապես վերածվում է մարդկային ռդբերգության»,- Եզուն է ՄԱԲԳ-ի գործադիր տնօրեն, դոկտոր Բաբաթուրե Օստինիեթինը:

Մեր աղջիկները և բարեգալականությունը

Ֆեյսբուքյան Ֆլեշմոբ «Իսկ դու ունե՞ս աղջիկ»



2014 Նա՛հի՛ »Սո՞ւո՞ւ»

WomenNet.am



Հոկտեմբերի 11-ը՝ Աղջիկների միջազգային օր

Շատերի մոտ հարց է ծագում՝ իսկ ինչո՞ւ ՄԱԿ-ը որոշեց առանձնացնել աղջիկ երեխաներին և հռչակել Աղջիկների միջազգային օր: Նպատակը մեկն էր՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել այն հատուկ խնդիրներին, որոնց բախվում են աղջիկները ողջ աշխարհում:

Աղջիկներին վերաբերող խնդիրները շատ են ու տարբեր՝ վաղ ամուսնությունն ու ծննդաբերությունները, կրթությունից զրկվելը, սեռական օրգանների ծխախոտի խեղումը և խտրականության այլ դրսևորումներ: Հայաստանում այսօր աղջիկ երեխաների նկատմամբ ծառայած, թերևս, մեծագույն խնդիրը պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներն են, որի պատճառով մեր երկրում ամեն տարի չի ծնվում մոտ 1500 աղջիկ, և եթե այդ դիմամիկան պահպանվի, ապա մինչև 2060 թվականը, մենք կկորցնենք 93.000 աղջիկ կամ ապագա մայր:

«ՆԷ»-ն ռդաների աշխարհում

«ՆԷ»-ն ռդաների աշխարհում վա խորհրդանշան ընտրեց ՆԷին և մուլտիմեդիայի ռդաների ուղարկեց նրան դեպի տղաների աշխարհ: «ՆԷն ջրերի աստվածուհու դուստրն էր: Նա ուրախ գետակ էր, որ հոսում էր սարերի ոլոր-մոլոր ծորակներով: Երբ ՆԷն ծնվեց, հայրը նրան բերեց իրենց գյուղ՝ վա խորհրդանշան ընտրեց ՆԷին և մուլտիմեդիայի ռդաների ուղարկեց նրան դեպի տղաների աշխարհ: «ՆԷն ջրերի աստվածուհու դուստրն էր: Նա ուրախ գետակ էր, որ հոսում էր սարերի ոլոր-մոլոր ծորակներով: Երբ ՆԷն ծնվեց, հայրը նրան բերեց իրենց գյուղ՝

»Յ՛ՆՆԻՆՆԻ+20. Յ՛ՆՆԻՆՆԻ »Ն՛ՆՆՆԻՆՆԻ»

Պեկինի գործողությունների օրագրի 12 ուղղություններից մեկը վերաբերում է աղջիկ երեխաների հիմնախնդիրներին: Ծրագրով առաջարկվում են հետևյալ գործողությունները:
• Աղջիկների նկատմամբ գոյություն ունեցող բացասական մշակութային սովորույթների վերացում:
• Աղջիկների իրավունքների պաշտպանություն և խթանում, նրանց ներուժի և կարիքների վերաբերյալ իրազեկության բարձրացում հասարակության մեջ:
• Կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտում աղջիկների նկատմամբ խտրական վերաբերմունքի վերացում:
• Մանկահասակների աշխատանքային շահագործման վերացում:
• Աղջիկների իրազեկության բարձրացում կյանքի սոցիալական, տնտեսական և քաղաքական հարցերի վերաբերյալ:
• Ընտանիքի դերի ամրապնդում աղջիկների դրության բարելավման գործում:







